

**ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Պատմական զիգությունների դոկտոր**

ՄԱՐԶ ԱԼԱԶԱՐԻ ՀՈՒՇԵՐԸ

Հայ տաղանդավոր բանաստեղծ ու հասարակական գործիչ Վահրամ Ալազարի ծըռնյան 100-ամյակին նվիրված հանդիսավոր հիատի ժամանակ, որը կայացավ Հայաստանի Գրողների միության դահլիճում, երոյթ ունեցավ նաև տողերին հեղինակը: Խմ պարտքը համարեցի երախտագիտության խոսքեր ուղղելու նաև շնորհաշատ բանաստեղծի կնոջը՝ Մարտ Ալազարին, որը բացառիկ անձնավորություն էր եղել՝ խելացի, գեղեցիկ, համարձակ, ինքնամուսաց կերպով նվիրված իր ամուսնուն: 1936 թվին, երբ շատերի հետ ձերբակալվում է Վ. Ալազարը, Մարտն չիրաժարվեց գրանից: Երբ գրանից պահանջում էին դատապարտման խոսքեր ասել իր անմեղ ամուսնու հասցեին, նա ոչ միայն հրաժարվեց, այլև մեղադրական խոսքեր շարտեց բերիական դահլիճների հասցեին:

Բայց դա էժան չնատեց Մարոյի վրա: Ծուտով, մի շարք պատասխանատու աշխատողների կանանց նման, նա էլ ձերբակալվեց և բանտ նետվեց: Սկզբեցին մղձավանշային օրեր Մարոյի համար: Բայց նա չվիճատվեց և հենց բանտում եղած ժամանակ կարողացավ գրավոր կապ հաստատել Վ. Ալազարի հետ. Մարոն հուսադրում էր իր ամուսնուն և նրա ընկերներին: Մի քանի տարի անց նա ազատվում է բանտից, բայց և հայտնվում չափազանց ծանր վիճակում. նա զրկվել էր բնակարանից, ունեցվածքից, նրա հետ խզել էին կապերը իր ծանրթթներից ու հարազատներից շատերը:

Տասը տարի ստալինյան զնդաններում տառապելուց հետո բանտից ազատվում և Երևան է վերադառնում Վ. Ալազարը: Բայց նրան չեն թողնում ապրել մայրաքաղաքում: Ստիպված նա մեկնում է Աշտարակ, որտեղ, շատ չանցած, հիմնադրում է Պերճ Պոռշյանի թանգարանը: Մարոն էլ, ինարկե, նրա հետ էր: 1948 թ. Ալազարին կրկին ձերբակալում են և անժամկետ աքսորում Սիբիրի խորքերը:

Խմանալով Ալազարի տեղը՝ Մարոն որոշում է մեկնել ամուսնու մոտ: Տաճալից և խիստ վտանգավոր այդ ուլուրությունը տևում է ավելի քան երկու ամիս: Հաղթահարելով հազար ու մի դժվարություններ, նա կարողանում է գտնել Ալազարին, իրավունք է ատանում ապրել նրա հետ և հավասարապես կիսում աքսորի ահավոր դժվարությունները:



Ստալինի մահից և Բերիայի գնդականարումից հետո Վ. Ալազանը, ինչպես նաև Գորգեն Մահարին ու Վաղարշակ Նորենցը հրավիրվում են Մոսկվա՝ իրենց գործերը քննելու համար: Նրանք բոլորն են լիովին արդարացվում են: Ծուտով նրանց է միանում Մարոն, և միասին վերադառնում են հայրենիք:

Բայց բանտերում և աքսորմերում կրած աճապոր տառապանքներն անհետուանք չեն մնում: Որոշ ժամանակ անց Վ. Ալազանը կաթվածահար է լինում և մինչև մահ՝ տասը տարի, գամկում անկողնում: Մարոն ամեն ինչ անում է՝ նրան խնամելու, նրա գործերը հրատարակության պատրաստելու, նոր երկերը գրի առնելու գործում:

Մարոյին ճանաչողները՝ Ավետիք Իսահակյանը, Ստեփան Չորյանը, Գորգեն Մահարին, Վաղարշակ Նորենցը, Սիրասը և որիշներ, խորհուրդ էին տալիս նրան գրի առնելի իր հուշերը: Ալազանի մահից հետո (1966 թ.) Մարոն ձեռնամուխ է լինում այդ գործին: Գրում է, ավարտում, մեքենագորում, բայց չի կարողանում տպագրել տպլ:

Գրողների միության դահլիճում կայացած նիստից հետո ինձ մոտեցավ Ալազանի դուստրը՝ տիկին Հասմիկ Ալազանը, և սկասմեց Մարոյի հուշերի մասին: Ծուտով, ծանոթանալու համար, նա ինձ հանձնեց Մարոյի հուշերի երկու հաստորից բաղկացած ձեռագիրը (ընդհանուր 940 էջ): Հուշերն ընդգրկում են Մարոյի կյանքի պատմությունը վաղ մանկությունից (հա ծնվել է Վանի ավին գտնվող Արծկե գյուղում) մինչև Վ. Ալազանի մահը: